№ 186 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7 1899 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7 № 186

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բաժանորդութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովհաննէս Յովակիմեան, Բէգլար և Մկրտիչ Մովսէսեան Մատթէոսեանները, ցաւօք սրտի յայտնելով, առաջինը իր թանգագին եղբօր, երկրորդները՝ իրանց սիրելի հօր

ՄՈՎՍԷՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ

ժամը, որ տեղի ունեցաւ ամսիս 4-ին, Շուլավէրում, խնդրում են ծանօթներին և ազգականներին չնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը, ամսիս 7-ին, հինգշաբթի օր, իր սեփական տնից դէպի Շուլավէրի սուրբ Աստուածածին եկեղեցին, և ապա հայոց գերեզմանատուն: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարևոր յանձնաժողով. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Իդէալի բացակայութիւնը. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Էջմիածնից:

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Շաբաթ օր, հոկտեմբերի 2-ին, Կովկասեան կառավարչապետը յայտարարեց բացված այն պաշտօնական յանձնաժողովը, որ պէտք է զբաղվի Կովկասի ազգաբնակութեան հարկատուութեան ձևերի բարւոքման խնդրով: Յանձնաժողովը պէտք է գործէ կառավարչապետի օգնական Ա. Ֆրեզէի նախագահութեամբ, և հոկտեմբերի 4-ին ունեցաւ իր առաջին նիստը: Այդ յանձնաժողովի որոշումները պէտք է էական նշանակութիւն ունենան մեր երկրի համար և մտցնեն հարկատուութեան աւելի կատարեալ և աւելի արդար եղանակ: Որոշված է, որ ծխահարկը պէտք է վերացվի և նրա տեղ պէտք է սահմանվի հողահարկ: Յանձնաժողովը մտադիր է իր պարապմունքները վերջացնել ներկայ ձմեռվայ ընթացքում և ներկայացնել կառավարչապետի խորհրդի քննութեան, որից յետոյ նա կուղարկվի պետական խորհրդին: Հարկատուութեան նոր սիստեմը պէտք է գործադրվի արդէն հետևեալ եռամեակից:

Հարկատուութեան այն ձևը, որ մինչև այժմ ընդունված էր, ունի այն հիմնական պակասութիւնը, որ նա զանազանութիւն չէ դնում հարուստի և աղքատի, բազմահող և սակաւահող գիւղացու մէջ: Այն գիւղական տունը, որ ունի 3 դեսեատին հող, վճարում է նոյնքան ծխահարկ, որքան նրա բազմահող հարևանը, որ ունի 15 և 30 դեսեատին հող: Հարկատուութեան համար այդտեղ նշանակութիւն չունի գոյքը և արդիւնաբերութիւնը, այլ միայն ծուխը, որ և դարձել է հարկատուութեան առարկայ:

Պէտք է նկատել, որ գործնական կեանքը շատ տեղ աշխատել է մեղմացնել օրէնքի անյարմարութիւնները և իրապէս մտցրել է հարկատուութեան աւելի արդար ձևեր: Օրինակ, մեր գիւղերից շատերում, որտեղ ընդունված է հողերի բաժանումը համիա-չարեքի կարգով գիւղական հասարակութիւնը բաժանել է հարկերի ծանրութիւնը նոյնպէս հողատիրութեան չափով: Բայց այդտեղ չը կայ մի որոշ և պարտաւորական ձև, որին հետևէին բոլոր գիւղերը, շատ բան կախված է կողմնակի աղդեցութիւններից և այդ պատճառով ենթակայ է պատեհականութեան և կամայականութեան: Անհրաժեշտ է ամբողջացրած և համակարգութեան բերած մի եղանակ, որ լինի ընդհանուր և պարտաւորական ամեն տեղի համար:

Անկասկած, հարկատուութեան եղանակի աւելի ևս բարձր կատարելութեան համար անհրաժեշտ է, որ Կովկասի բոլոր հողերը ճիշդ կերպով չափված լինէին և այդ հողերի որակութիւնը բաւական կերպով ուսումնասիրված, որպէս զի հարկը կարելի լինէր ամենաճիշդ հաշվով սահմանել որոշ հողի և որոշ արդիւնաբերութեան չափով, բայց և այնպէս չը պէտք է յետաձգել հարկատուութեան արդար ձևի ներմուծումը հէնց այն պատճառով, որ նա դեռ չէ պարունակում իր մէջ բոլոր կատարելութիւնները: Սպասելով հողաչափութեան վերջանալուն և հողի յատկութեան գիտական ուսումնասիրութեան, կառավարութիւնը անկարող կը լինի շուտով փոխել հարկատուութեան այն հին ձևը, որի անկատարելութիւնը արդէն վաղուց դարձել է անտանելի: Այդ պատճառով պէտք է ողջունել, որ կառավարութիւնը վճռել է վերացնել հարկատուութեան հին եղանակը և մշակել աւելի արդար և կատարեալ հարկատուութեան սիստեմ, որ ժամանակով կարող է աւելի և աւելի կանոնաւորվել և բարւոքվել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Սեպտեմբերի 25-ին

Ս. Գէորգի տօնի առիթով այսօր Էջմիածինն ու Վաղարշապատը կենդանութիւն են ստացել: Վաղարշապատի փողոցները լիքն են բազմաթիւ կառքերով և սայլերով, իսկ վանքի լայնատարած բակում շրջում են հազարաւոր ուխտաւորներ Ալէքսանդրօպոլի, Երևանի և Սուրմալուի գաւառներից և մեր գաւառի շրջակայ գիւղերից: Ուխտաւորների բազմութեան մէջ, թէև շատ քիչ քանակութեամբ, նկատելի են նաև ինտելիգենտ անձինք, որ եկել են Կովկասի հայաբնակ քաղաքներից ներկայ լինելու Գէորգեան ճեմարանի 25-ամեայ տօնին, որ որոշված է կատարել նոյնպէս այսօր:

Առաւօտեան պատարագի կէսին Վեհափառը, իջնելով տաճար, ընդհատեց պատարագը, հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ Գէորգ Քանանեանցի յիշատակին և կրկին վերադարձաւ վեհարան: Թէ ինչու Վեհափառը ըստ իր սովորութեան չը մնաց տաճարում մինչև պատարագի վերջը և ինչու հոգեհանգիստ կատարեց պատարագի կէսին՝ այդ մնաց բոլորի համար էլ անբացատրելի:

Պատարագից յետոյ Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեամբ Էջմիածնի միաբանութիւնը ճեմարանի սաների հետ միասին հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ Գէորգ IV կաթողիկոսի գերեզմանի վրա. երկու պակներ էին դրված գերեզմանի վրա—ճեմարանի այժմեան աշակերտների և Երևանում գտնված մի խումբ նախկին սաների կողմից: Սովորական դամբանականի փոխարէն լսարանի ուսանող Ե. Տէր-Մինասեանց մի Ուխտ կարդաց և յայտնեց, որ հանգուցեալ հիմնադրի շիրիմի առաջ 8 աշակերտներ ուխտում են ընդունել հոգևոր աստիճան: Վեհափառը այդ 8 հոգուն անմիջապէս բախշեց ուրարներ:

Հոգեհանգստից յետոյ Վեհափառը, միաբանութիւնը և ժամաւորների ամբողջ բազմութիւնը, ամեն տարվայ սովորութեան համաձայն, շտապեցին ճեմարանի բակը, ուր ճեմարանի գլխաւոր մուտքի առաջ բացօթեայ կատարվելու էր քանանհինգամեակի առիթով հանդէս:

Հանդիսականների ներկայութիւնը կեանք տուեց և ճեմարանին, որը ամբողջովին զարդարված էր գոյնզգոյն դրօշակներով, իսկ նրա գլխաւոր մուտքի ամբողջ պատը զարդարված էր կանաչներով և ծաղիկներով, որոնց մէջ հանդիսականների ուշադրութիւնն էին գրաւում՝ Թագաւոր Կայսրի վենդէլը, հանգուցեալ հիմնադրի իւղաներկ և ճեմարանի ասեղնագործ նկարները: Սրանց հանդէպ ճեմարանի սաները պատրաստել էին մի հաստատ, բայց գեղեցիկ յաղթական կամար, զարդարված կանաչներով, ծաղիկներով, բազմաթիւ դրօշակներով և զանազան նկարներով:

Գեղեցիկ զարդարանքի շուրջը և հոյակապ շինութեան առաջ խմբված ուխտաւորների բացառիկ բազմութիւնը, որի մեծ մասը կազմում էին օրիորդներ և տիկիններ, անհամբեր սպասում էր լսել ճեմարանի գոյութեան 25-ամեայ պատմութիւնը իր հաշիւներով, իր աջողութիւններով և երջանիկ ու տխուր պատահարներով: Բայց իզուր. նա եկել էր, որպէս նկատեց Վեհափառը իր օրհնութեան մէջ՝ միմիայն հանդէսը չքեղացնելու և ճեմարանի զարդարանքը աւելի ևս գեղեցկացնելու համար:

Եւ իսկապէս. ինչ անուն տալ այն տեղեկագրին, որ կարդաց նոր տեսուչ Կարապետ վարդապետը ճեմարանի 25-ամեայ գոյութեան առիթով. եթէ դա ճեմարանի պատմութիւնն էր, ինչ կապ ունէր նրա հետ և իր կենսագրութիւնը: Եթէ դա ճեմարանի 25 տարվայ ուսումնական և տնտեսական հաշիւն էր, ինչ կապ ունէր նրա հետ զանազան դպրոցների տեսակների երկարապատմութիւնը, որի ժամանակ նոյն իսկ միաբաններից մի քանիսը սկսեցին նստած տեղերում ննջալ, և վերջապէս եթէ դա սոսկ նկարագրութիւն էր, քաղված ճեմարանի գլխաւոր աղբիւրներից, ինչու միմիայն մի որոշ կուսակցութեան գործունէութիւնն էր փառաբանվում, իսկ միւսներինը մոռացութեան տրվում: Թւելով մի առ մի բոլոր տեսուչների և նրանց օգնականների անունները՝ այժմեան տեսուչը անցաւ ճեմարանի ուսումնական մասին, որից երևաց, որ ճեմարանը իր 25 տարվայ գոյութեան ընթացքում ընդունել է 1126 աշակերտ, որոնցից ունեցել է 119 լսարանաւարտ և 165 դպրոցաւարտ: Սրանցից 17 անձ ընդունել են կուսակրօնութիւն, 22 հոգի ձեռնադրվել են քահանայ, մնացածի մեծ մասը նուիրել է իրան ուսուցչութեան, իսկ մեծ մասը ընթանում է ճեմարանի նպատակին հակառակ: Թէ ովքեր են իրանց գործունէութեամբ ճեմարանի նպատակին հակառակ ընթանում՝ տեսուչը ոչինչ չասաց. սակայն հասկանալի է միանգամայն, որ սրանք այն անձնաւորութիւնները պէտք է լինեն, որոնք իրանց նուիրել են գրականութեան, աշխատակցում են հայ մամուլին և պարապում են վաճառականութեամբ և գործակատարութեամբ, որովհետև ոչ մի բառ չասվեց այսպիսիների մասին:

Թեթև կերպով և բաւական մեղմ ու ցաւակցական լեզուով յիշատակելով ճեմարանի 25-ամեայ գոյութեան ընթացքում տեղի ունեցած աշակերտական երեք խառնակութիւնները՝ տեսուչը անցաւ ճեմարանի տնտեսական մասին և յայտնեց, որ ճեմարանը սկզբներում տարեկան ծախս է ունեցել 7862 ր. 50 կ., 1882 և 1883 թւականներում՝ տարեկան 34,835 ր., իսկ այնուհետև մնացած տարիներում ծախս է եղել տարեկան մօտ 20,000 ր., չը հաշված աշակերտների ուտելիքը, որ ամենայն տարի շարունակ է յետաձգել հարկատուութեան արդար ձևի ներմուծումը հէնց այն պատճառով, որ նա դեռ չէ պարունակում իր մէջ բոլոր կատարելութիւնները: Սպասելով հողաչափութեան վերջանալուն և հողի յատկութեան գիտական ուսումնասիրութեան, կառավարութիւնը անկարող կը լինի շուտով փոխել հարկատուութեան այն հին ձևը, որի անկատարելութիւնը արդէն վաղուց դարձել է անտանելի: Այդ պատճառով պէտք է ողջունել, որ կառավարութիւնը վճռել է վերացնել հարկատուութեան հին եղանակը և մշակել աւելի արդար և կատարեալ հարկատուութեան սիստեմ, որ ժամանակով կարող է աւելի և աւելի կանոնաւորվել և բարւոքվել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Հնդկաստանի հարուստ հայ գաղթականութիւնը այսօր համարեա ոչնչացած է. բայց անցեալում այդ փոքրաթիւ հայ հասարակութիւնը տուել է շատ օրինակներ, թէ ինչպէս կարելի է գործադրել հարստութիւնը հանրաշահ գործերի համար: Այդ բարեգործական եռանդի յիշատակներից մէկը ապրում է մինչև մեր օրերը. դա Վենետիկի Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանն է: Մուրադեան կտակը մեր մէջ շատ վէճերի նիւթ է եղել և արդէն ունի մի բաւական մեծ գրականութիւն: Ինչպէս յայտնի է, Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը, ստանալով Հընդկաստանից մօտ երեք միլիոն ֆրանկի մի անգին գումար, պարտաւոր էր Եւրոպայում պահպանել մի բարեկարգ դպրոց չքաւոր և որբ հայերի համար: Ով ծանօթ է այդ կտակի և նրա գործադրութեան պատմութեան հետ՝ նրա համար շատ պարզ է, որ կտակողի կամքը ճշգրտութեամբ կատարել չէր կարող Մխիթարեան միաբանութիւնը նախ այն պատճառով, որ նա կրօնական մի հաստատութիւն է, հետևաբար անկարող է հեռու մնալ դաւանաբանական խնդրութիւններից և տալ դպրոցին ժամանակի պահանջներին համապատասխանող կրթական ուղղութիւն: Այդպէս էլ եղաւ: Հռօմի պրոպագանդայի խիստ ճնշումների տակ Մխիթարեանները հարկադրվեցան չեղվել Մխիթարի սահմանած ուղղութիւնից, աւելի որոշ, աւելի սեղմված կրօնական գոյն ընդունել, իսկ Մուրադեան դպրոցը դարձնել մի կաթոլիկ վանական հաստատութիւն: Ահա այս հանգամանքը հայերի մէջ ահագին վէճեր բարձրացրեց: Սամուէլ Մուրադը կտակել էր իր միլիոնները ոչ թէ կաթոլիկներին, այլ բոլոր հայերին: Եղան շատերը, որոնք փորձեցին հարցը իրաւաբանական հողի վրա դնել. Կ. Պոլսի հայերը մի ժամանակ ուզեցին դատ բանալ Մխիթարեանների դէմ և օրէնքով հարկադրել, որ նրանք Մուրադեան կըտակին իրանց ցանկացած բացատրութիւնը չը տան, այլ կատարեն նրան բառացի ժամով: Սակայն Վենետիկը այդ բոլոր պահանջների, ներկայացումների դիմաց խորին լռութիւն պահպանելու քաղաքականութիւնն ընտրեց: Եւ Մուրադեան կտակը այնպէս էլ մնաց Մխիթարեանների անձնական տրամադրութեան տակ: Այնուամենայնիւ, Կ. Պոլսի հայոց մամուլը չէ մոռանում, որ Մխիթարեանները անիրաւացի կերպով են զրկում հայ չքաւոր երեխաներին ուսման բարիքներից, ուստի ամեն մի յարմար առիթով յայտնում է իր դժգոհութիւնը: Այսպէս, այս ամառ «Արևելքում» տպվեցան մի քանի յօդուածներ, որոնք նոյն միտքն էին արծարծում: Վենետիկի «Բազմավէպը» առհասարակ չէ սիրում այդ հարցի մասին մանրամասն և պարզ խօսել և բաւականանում է ընդհանուր խօսքերով, կիսատ բողոքներով, թէ ինչու են այդպէս խօսում, ինչու Մխիթարեանների վրա այդ տեսակ մեղադրանքներ են բարդում, քանի որ այդ միաբանութիւնը «ազգի առաջադիմութեան համար» է աշխատում: Հարկադրված լինելով, վերջապէս, մի բան ասել իրան պաշտպանելու համար, Մխիթարեան միաբանութիւնը «Բազմավէպի» վերջին համարում զետեղեց մի յօդուածապատասխան, նուիրված «Մուրադ Ռաֆայէլեան լիկէոնին»: Յօդուածը ունի վեց հատ պատկերներ. հինգը զանազան տեսարաններ են, իսկ վեցերորդը 9 աշակերտների և տեսուչ Հ. Նուրիխանի նկարներն է ներկայացնում: Որքան էլ գեղեցիկ են այդ պատկերները, բայց նրանք, ի հարկէ, շատ բան չեն պարզում. յայտնի է դառնում միայն, որ դպրոցը ունի գեղեցիկ շինութիւն, ունի մատուռ և այլն: Բայց ինչ է ասում ամսագիրը ամենքին հետաքրքրող հարցի մասին:

Նոյն հաստատութիւնը անընդհատ Հայաստանին հասուց ու կը հասցընէ մտքով, սրտով ու գործով սիրելի ու հարազատ զաւակներ: Ու այս ուղղութիւնը կտակարարներու փափաքն էր, որ չեղումներ չունեցաւ: Նոյն հաստատութեան վարիչները արթուն ու վրէժխնդիր իրանց պատասխանատու մեծ գործին, անմեռ չի թողին բարերարներու լուման.

տոկուն ու յարատեակ ջանքով, արդիւնաւոր ըրին ու ամրացուցին նոյն լուսան և անոր արդիւնքով միշտ կանգուն պահեցին Մուրատ-Ռաֆայէլեան հաստատութիւնը:—Ահա իրական, ահա ճշմարիտ պատկերն այն վարժարանին կացութեան և ուղղութեան:

Դա մի պատկեր է, նոյն իսկ իրական պատկեր, բայց կազմված ընդհանուր, անորոշ բաներից: Հարկաւոր էր փաստական պատկեր. հարկաւոր էր երբ և իցէ մի կանոնաւոր հաշիւ ներկայացնել հասարակութեան և առ ժամանակ թողնել դատարկ ներբողները, հաւատացած լինելով որ ամենամեծ ներբողը փաստն է: Ցոդուածի մէջ դրված են ինն աշակերտների կենսագրութիւնները, և դրանցից մենք իմանում ենք, որ հաւարեա ամենքը իրանց սկզբնական ուսումը ստացել են Թիւրքիայում, Մխիթարեանների դպրոցներում: Այդ դպրոցներում Մխիթարեանները կարող են հաստատել այնպիսի կարգեր, որոնք համապատասխանում են մի կրօնական միաբանութեան հայեացքներին. բայց Մուրադեան վարժարանը Մխիթարեանների սեփականութիւնը չէ. պէտք է ապացուցանել, թէ ճշդապահ կտակակատարներ էք դուք, իսկ ապացուցանել կարող էք՝ եթէ վարժարանը բաց է ամեն մի հայի համար: Մենք ենթադրում ենք, որ այդտեղ կարող են լինել մի քանի աշակերտներ ուրիշ դաւանութեան պատկանող հայերից. բայց այդ բաւական չէ. եթէ Մուրադեան վարժարանը չը լինէր մի կրօնական ուխտի հսկողութեան տակ, եթէ կրօնը նրա մէջ երկրորդական առարկայ լինէր՝ մենք ոչինչ չէինք ասի. բայց քանի որ այդպէս չէ, հետաքրքրական կը լինէր իմանալ, թէ վարժարանը ինչպէս է վերաբերվում իր ոչ-կաթոլիկ աշակերտների կրօնական զգացմունքներին, եթէ կան ոչ-կաթոլիկներ: Անցեալի պատմութիւնից մեզ յայտնի է, որ Հռոմի պրոպագանդան սաստիկ ընդդիմանում էր վարժարանում լուսաւորչական կրօնուսոյց ունենալու առաջարկութեան և Մուրադեան վարժարանը հաւարում էր մի լաւ միջոց «հերձուածող» հայերին դարձի բերելու համար: Միայն այդ հանդամանքը բաւական էր, որ Մուրադեանի կտակը չը հասնէ իր նպատակին, որովհետև միայն այդ կրօնական խորութիւնը բաւական է, որ դպրոցի դռները ինքն ըստ ինքեան փակվեն ոչ-կաթոլիկ հայերի առաջ, քանի որ կրօնական մոլեռանդութիւնը ոչ միայն սահմանափակումներ և անիրաւութիւններ է ծնեցնում, այլ և առաջ է բերում նոյն աստիճանի յամառ դիմադրութիւն: Ի՞նչպէս է այժմ, վերացվել է այդ մեծ արգելքը: Ահա թէ ինչի մասին Մխիթարեանները պէտք է խօսեն պարզ և որոշ: Մուրադեան վարժարանից մենք մեծ սպասելիքներ չունենք, ինչպէս և ամեն մի փակ, նեղ-կղերական ուղղութեամբ ղեկավարվող դպրոցից: Դրա ապացոյցն է հենց վարժարանի վաթսունամեայ անցեալը, որ շատ աննշան պտուղներ է տուել: Բայց կարծում ենք, որ այդ դպրոցը կը կարողանար մի որոշ դեր կատարել իբրև կրթութիւն տարածող մի հիմնարկութիւն, եթէ այնտեղ տիրէր կրօնական հաւասարութիւն և աշակերտները ընտրվէին ամենաաղքատ դասակարգից և ոչ թէ Մխիթարեան վարդապետների ազգականներից, ինչպէս այդ ապացուցված է դեռ տասնեակ տարիներ առաջ: Որքան էլ Մխիթարեան հայրերը բարի ցանկութիւններ ունենան, բայց հարկաւոր է փոփոխել դպրոցի կարգերը, պէտք է դարձնել նրան հասարակական սեփականութիւն և որքան կարելի է շատ պարզ պատկերի մէջ ներկայացնել այն հիմնարկութիւնը, որ հայի բարեգործութիւնն է ստեղծել ընդհանուր հայ ազգի համար: Պատկերազարդ յօդուածները ոչինչ բաւարարութիւն չեն տալիս ընթերցողի հետաքրքրութեան և չեն հերքում այն մեղադրանքները, որոնք վաղուց բարդված են Ս. Ղազարի միաբանութեան վրա:

ԻԴԵԱԼԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ

«Մշակի» 182 համարում կարդացինք Պ. Մ.-ի յօդուածը, որի մէջ նա հաղորդում է թէ Ալէքսանդրօպոլում սեպտեմբերի 26-ին կայացաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը, որը մի ձայն որոշեց շարունակել իր գործունէութիւնը և անյապաղ ներկայացնել նոր կանոնադրութիւնը ուր հարկն է՝ հաստատութեան համար:

«Ո՞վքեր էին, գոչում է, արդարացի զայրոյթով լի, պ. Պ. Մ., այսօրվայ մեր Բարեգործական ընկերութեան անդամները:—Ծառայողներ և վաճառականներ, պատուաւոր, բայց համարեա բոլորն էլ հասակաւոր անձնաւորութիւններ: Իսկ ո՞րտեղ էր մեր ահագին երիտասարդ սերունդը, մեր իբր թէ ժամանակ ինտելիգենցիան. ամօթ իրան. նա այնքան ստորացել ու պառաւել է, որ նրա դոյութիւնն անգամ մոռացված է և տեղն անգամ անյայտ: Կովկասի ոչ մի քաղաքում մեզ չը պատահեց երիտասարդ սերնդի կողմից տեսնել այդ աստիճան անտարբերութիւն դէպի հանրօգուտ գործը, դէպի մտաւոր առաջադիմութիւնը, ինչպէս Ալէքսանդրօպոլում»:

Այս դեղեցիկ և զգացված խօսքերի վրա ոչինչ գրեթէ չէ մնում ինձ աւելացնել Ալէքսանդրօպոլի երևելի «ինտելիգենցիայի» մասին: Մի քաղաքում կայ և բնակվում է «մի երիտասարդ ահագին սերունդ», այդտեղ չը կայ և ոչ մի այլ հիմնարկութիւն, բացի Բարեգործական հիմնարկութիւնից, ուր կարող լինէր այդ ահագին ինտելիգենտ սերունդը ուղղել իր քայլերը մի բարի գործ կատարելու համար: Հասարակաչահ հիմնարկութիւններից զուրկ լինի Ալէքսանդրօպոլը և ունենայ միմիայն մի ողորմելի Բարեգործական ընկերութիւն, որի այսօր «լինել կամ չը լինելն» է վճռվում և որի մէջ միայն կարելի է փոքր ի շատէ յաղուրդ տալ իր ժարդավայել ինտելիգենտներին, և ձգտումներին, և ինչ... չը գնալ այդ ժողովին, համարվելով հանդերձ հայ, քրիստոնեայ, ինտելիգենտ... Լռեցէք, պարոններ, թաղվեցէք, որ այլ ևս չը տեսնեն մարդկերանց բարի աչքերը ձեր կեղծ և դիմակաւոր երեսները, ձեր բարոյական դատարկութիւնը, ձեր ինտելիգենտութիւնը, որից Աստուած թող ազատ պահէ և մարդակեր վայրենիներին:

Այո, իդէալի կատարեալ բացակայութիւն:

Ուզում էք որ ձեզ հաշտ աչքով նայեն, պարոններ: Շնորհ արէք, ասպարէզ ելէք, ձեր ձեռքն առէք Բարեգործական ընկերութիւնը, գործով ցոյց տուէք, որ զուրկ չէք իդէալից, այն իդէալից, որը միակն է, որ ջերմացնում է այս աշխարհում մարդկային սիրտը, նրան մի կտոր մսից դարձնում է աւետարան, աստուածային պատգամ, գործունէութեան աղբիւր, յաւիտենականութեան պտղարան, որի առաջ խորտակվում են ամենայն արգելք: Այն ժամանակ դուք կապացուցանէք թէ դուք մարդ էք և քրիստոնեայ:

Բայց երանի թէ այդ երևոյթը միայն և միմիայն Ալէքսանդրօպոլում լինէր: Մեր անծանօթ բարեկամ, պ. Պ. Մ., դուք շատ լաւատես էք եղել, որտի զեղման ազդեցութեան ներքոյ փակել էք ձեր աչքերը միւս քաղաքների համար: Ամեն տեղ, մի որոշ չափով և աստիճանով, մի և նոյնն է: Ժամանակիս, այսինքն դարիս վերջին, «ինտելիգենտ» երիտասարդութեան սերունդը, ոչ միայն հայերիս մէջ, այլ և ամբողջ Ռուսաստանում և գրեթէ ամբողջ Եւրոպայում նոյնն է—զուրկ բարձր իդէալից: Անշուշտ սա իսկ սեփական գիւտը չէ, բայց և նոյնքան հաստատ է և ճշմարիտ. երիտասարդ սերունդ, իդէալից զուրկ: Ի՞նչ կարող է լինել դրանից աւելի զզուելի:

Մենք ամեն օր հանդիպում ենք թէ ռուս, թէ վրացի և թէ հայ պառաւ երիտասարդներ, բայց ժանաւանդ հայ՝ դատարկախօս, պղերգ, անձնասէր, նիւթապաշտ, հեռու ամեն գաղափարից, մինչև ուղեղի ծուռը թափանցված ծխախոտով, թղթախաղով, փողով և վաւաշոտութիւնը իրանց բան ու գործ չինած, և երբ սկսում ես խօսել մի տեսական խնդրի վրա, իսկոյն հարբածի նման կոպերը ծանրութեամբ իջնում են և իրանք ստանում են լիակատար ապուշի կերպարանք:

Թիֆլիսում անցեալ օրը հայոց Բարեգործական ընկերութեան առաջին ժողովն էր. ոմ կար ամբողջ Թիֆլիսից: Մի հատ մարդ. երևի նրա տատն էլ կամ պապը գաւառցի է. ուրիշ ոչ ոք Կովկասի մայրաքաղաքի երիտասարդ սերնդից: Երիտասարդը, ինչպէս և ամեն հասակի մարդ, առանց իդէալի,—դա պայտ է առանց ձիու, զէնք առանց զինուորի, պատեան առանց շէնքի, կարաս առանց գինու, մի ամօթ և նախատինք է դարի և պատմութեան համար. այդ ասել է՝ լինել նեխած, փթած դիակ և ոչ կենդանի մարդ:

Կան, ի հարկէ, երիտասարդներ, որոնց աչքերի մէջ փայլում է սրբազան հուրը, Աստուածային փայլը. դրանք մի-մի անուշահոտ վարդեր են, որոնց հետ տեսնվելիս մարդու սիրտը լցվում է թարմութեան և կենսականութեան դրաւիչ ոյժով: Տուէք, տուէք մեզ այդպիսի երիտասարդներ:

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Հոկտեմբերի 1-ին

Կալոցի վերջանալուց յետոյ, հիմա կարելի է մօտաւորապէս ճիշդ տեղեկութիւն տալ այս տարվայ մեր գաւառի բերքի մասին:—Խոտը և յարդը ընդհանրապէս ամբողջ գաւառում այս տարի շատ սուղ են. այդ պատճառով հիմիկվանից այդ մթերքների թանգութիւն է տիրում. խոտի պուդը արժէ 40 կօպ., իսկ յարդինը՝ 15—16 կօպէկ: Իբրև հետևանք ապուրի թանգութեան՝ անասնեղէնը համեմատաբար էժան է, որից նոյնպէս մեծ վնաս է կրում գիւղացին: Հացահատիկի բերքը լեռնային գիւղերում ընդհանրապէս բաւարար է, տեղ-տեղ նոյն իսկ լաւ է, ինչպէս սպասվում էր. այդ գիւղերը թէ ուտելու պաչար ունեն և թէ սերմացու: Բայց գաւառի տափարակ մասի այն գիւղերը, որոնց ցորենի արտերը փչացրել էին հացի բզէզն ու հոտենտոտեան բաղիճը՝ այժմեանից իսկ մեծ կարօտութեան մէջ են. շատ արտերից սերմը նոյն իսկ չեն վերցրել. եղածն էլ բանի պէտք չէ:

Գլխաւորապէս վնասված են հետևեալ 13 հայ գիւղերը, որոնք գտնվում են քաղաքի շուրջը, 15—20 վերստ տարածութեան վրա.—Վաչիան, Գիւմիւրդա, Զանդուրա, Դիլիսկա, Բավրա, Կարտիկա, Խուլգումա, Կուլիկա, Մաճադիա, Արագովա, Օրճա, Կորխ և մասամբ Խանդո: Այս գիւղերը համարեա թէ ամենևին ցորեն չունեն, եղածն էլ չնչին քանակութեամբ և սերմելու համար անպէտք. բայց գարի ունեն, որովհետև բզէզները չեն վնասել գարու արտերին: Մի քանիսը այդ գիւղերից արդէն խնդրագրերով դիմել են նահանգական իշխանութեանը և նպաստ են խնդրել պաչարի և սերմացուի համար. բայց չը պէտք է դրանով բաւականանալ. մեր գիւղացին շատ է տգէտ. պէտք է կազմակերպված օգնութեան գալ դրսից, և այդ տեսակէտից Թիֆլիսի և մեր գաւառական ինտիլիգենցիան այս տարի մեծ պարտք ունեն կատարելու:

Վերև յիշած գիւղերին պէտք է երկու տեսակ օգնութիւն հասցնել. առաջինը՝ միջոց տալ չքաւոր գիւղացիներին պաչար և սերմացու ձեռք բերելու, իսկ երկրորդը՝ վնասակար միջատների դէմ կռուել: Վերջինի սկիզբը արդէն դրված է. հարկային տեսուչ պ. Լ. Ղուկասեան այդ միջատներից ուղարկել էր հողագործութեան դեպարտամենտի միջատաբանական (энтомологическое) բիւրօն և յայտնի միջատաբան պրոֆէսսոր Լինդեմանին և դրանց դէմ կռուելու մասին ցուցմունքներ էր խնդրել: Բիւրօի կառավարիչ միջատաբան Պօրչինսկի հաղորդել է, որ այդ նպատակով բրոշիւր է կազմվել, որ տպագրվելուց յետոյ կուղարկվի՝ ժողովուրդի մէջ տարածելու համար: Ի հարկէ, դրանով չը պիտի բաւականանալ. ցանկալի է, որ տեղական մասնագէտները այդ միջատների դէմ կռուելու մասին հայերէն լեզուով ևս հանրամատչելի ժողովրդական բրոշիւր կազմեն՝ ձրի տարածելու համար: Անկասկած, այդ բանում աւելի ձեռնհաս է գիւղատնտեսական ընկերութիւնը: Այո, պէտք է վաղօրօք կուել գիւղացու բարօրութիւնը ոչնչացնող այդ միջատների կրկին անգամ երևան գալուն դէմ, թէ չէ՝ ապագայում աւելի մեծ տարածութեան վրա աւերածութիւններ կանեն նրանք: Նոյնպէս պէտք է աշխատել, որ գիւղացիները այս տարի զոհ չը գնան բորենի վաչխառուներին և մեր փոքրիկ քաղաքում վերջին տարիներս բազմացած ավբարատէրերին, որոնք իրանց ցիկլոպային աչքերը յառած՝ որսի, այսինքն գիւղացու դժբախտութեան են սպասում:

Սալլիւմեան

կաբար տրվում է վանքի հաշուով: Ահա այն բոլոր տեղեկութիւնները, որ հաղորդեց տեսուչ վարդապետը: Իսկ թէ աշակերտները ինչ առաջադիմութիւն են ցոյց տուել 25 տարվայ մէջ, որքան աշակերտներ են ընդունվել ձրի, որքան թոշակաւոր և որքան երթեկ. ինչ արժանաւորութիւններ ունեն ճեմարանից աւարտած և կուսակրօն և քահանայ ձեռնադրվածները, որքան ծախք է ունեցել տարէց տարի ճեմարանը և որպիսի պահանջների վրա է ծախսված եղել գումարը. որքան մուտք է ունեցել տարէց տարի և որպիսի աղբիւրներից է լրացվել տարեկան տասնեակ հազարներով ծախսը և այլն և այլն... սրանց և ոչ մէկի մասին որոշ տեղեկութիւն չը տրվեց և դրամական հաշիւը ամբողջովին ծածկված մնաց: Տեսուչ վարդապետի կարդացածից երևաց նաև, որ ճեմարանի քանանհինգամեակի առիթով ստացված են մօտաւորապէս 3000—3500 ռուբլի դրամական նուէրներ զանազան անձերից, որից 400 ռուբլի նուիրել է Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանը, որպէս զի այդ նուէրով պատրաստվի Վեհափառի նկարը և դրվի ճեմարանի հանդիսարանում. 1000 ռուբլի նուիրել է պ. Կ. Լալայեանց, 300 ռուբլի պ. Ա. Աթաբէգեանը, 665 ռուբլի Սիօն վարդապետի միջոցով ժողովված է Հին-Նախիջևանի վիճակից. մնացածները զանազան անձերից և ճեմարանի նախկին սաներից: Իսկ ինքը տեսուչը ստացել է 500 ռ., որպէսզի այդ գումարով կազմէ և տպագրէ մի քարոզագիրք:

Տեսչի տեղեկագրից յետոյ առաջին լսարանի ուսանողներից մէկը գրաբար «Զօն» կարդաց և հանդէսը վերջացաւ Վեհափառի օրհնութեամբ:

Հանդէսից յետոյ միաբանութիւնը և ճեմարանի ուսուցիչներն ու սաները ուղևորվեցին վանքի սեղանատունը, ուր պատրաստված էր փառաւոր ճաշ: Ճաշին ներկայ էր Վեհափառը և հրաւիրված էին մի քանի հիւրեր: Սովորական կենացների բաժակը վերջանալուց յետոյ՝ Երևանի թեմական դպրոցի նոր տեսուչ Բենիկ վարդապետը բաւական երկար խօսեց «մեծ մարդու» մասին, բայց ոչ իր երկար ճառը և ոչ էլ իր յիշած փիլիսոփայի բառերը չը կարողացան պարզել մեծ մարդը:

Երեկոյեան, բացօթեայ հանդիսաւոր ժամերգութիւնից յետոյ, ժամի 6-ին ճեմարանի հանդիսարանում նշանակված էր «գրականական երեկոյթ», որին պէտք է ներկայ լինէին միմիայն միաբանները, ուսուցիչները և ճեմարանի նախկին սաները. սակայն մինչդեռ մի կողմից ամենայն հեշտութեամբ թոյլտվութիւն էին ստանում և ներս էին մտնում՝ ճեմարանի կօշկակարը իր ընտանիքով, ճեմարանի դերձակը և այլն, միւս կողմից անպատուութեամբ և կոպտութեամբ դուրս էին արվում և մերժվում այնպիսի ինտելիգենտ անձինք, որոնք հեռու տեղերից եկել էին միմիայն ճեմարանի հանդէսը տեսնելու և մի բան հետները տանելու: Երբ երեկոյթը սկսվեց՝ բարձրացաւ ամբիոն պ. Մ. Աբեղեանը և հատուկ ձևով պատմեց Գէորգ IV կաթողիկոսի կենսագրութիւնը: Աւելի հետաքրքրական էր Կոմիտաս վարդապետի «Խանդարմունք հայոց եկեղեցական երգեցողութեան» ատենաբանութիւնը, որ կատարվում էր հայոց և ասորոց երգերի և ձայների համեմատութեամբ, սակայն վարդապետի ընտրած նիւթը միանգամայն անյարմար էր երեկոյթի նպատակի և անհասկանալի՝ լսողների համար: Կոմիտաս վարդապետից յետոյ կարդացվեցան ուղերձները: Տիրայր վարդապետը Շուշու դպրոցի կողմից գրաբար, պ. Զալեանցը Երևանի թեմական դպրոցի կողմից ամենաթուն և խրթին գրաբար, իսկ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի կողմից պ. Ս. Մանդինեան մի գեղեցիկ, աշխարհաբար ուղերձ, որ իր գեղեցիկ դարձուածքներով և խմաստալի բառերով հիացրեց ունկնդիրներին և արժանացաւ անկեղծ համակրութեան և բուռն ծափահարութեան:

Մինչև երեկոյթի վերջանալը ճեմարանի բակը լցվել էին տասնեակ հազար ուխտաւորներով, որոնք չտապել էին ճեմարան՝ լսելու ալէքսանդրօպոլցի յայտնի նուագիչ-ջութակահար «Համփօի» և նրա խմբի քաղցր երգերը և տեսնելու ճեմարանի սաների պարերը. սակայն դժբախտաբար բազմութիւնը այնքան շատ էր, որ հարիւրից մէկը հազիւ բախտ ունեցաւ լսել յայտնի «Համփօին» և տեսնել սաների պարերը: Հետաքրքիր էին նաև գիւղացի աղջիկների և տղաների առանձին-առանձին երգած «լէլէները» և ժողովրդական պարերը, որոնց շուրջը նոյնպէս ժողովված էր ահագին բազմութիւն: Ճեմարանը ամբողջովին լուսաւորված էր հազարաւոր ճրագներով և գոյնզգոյն լապտերներով: Լուսաւորութիւնը այնքան գեղեցիկ էր, որ ոչ ոք չէր ուզում բաժանվել և ոչ ոք չէր կշտանում զբօսնելուց: Մինչ հասարակութիւնը զմայլած լսում էր ժողովրդական երգերն ու լէլէները և դիտում հայ գեղջկուհու «գեօնդը»՝ ճեմարանի ներսում ուսուցիչներն ու սաները՝ միաբանութեան և ներկայացուցիչների հետ ընթրիքի սեղանի առաջ նստած կենացներ էին խմում և լէլէների ձայնը իրանց կեցցէներով խլացնում... Այստեղ անկարելի է մոռացութեան տալ երեք հանգամանք, որ աչքի էին ընկնում և՛ բացօթեայ հանդէսին, և՛ ընթրիքին և ամեն տեղ, ուր ճառելու սեղան էր բացվում: Դրանք էին՝ 1) վերին աստիճանի փաղաքշանք և պաչտամունք դէպի իւրայինները և իրանց կուսակցութիւնը, 2) դանդաղ ճեմարանի նիւթական անապահով վիճակից և 3) «ողորմութիւն արէք...» ճեմարանի գոյութիւնը պաչտպանելու:

Սակայն բաւական է... Ամեն ինչ պէտք է «բամբասանք»-ներով բացատրվի. աւելի լաւ է մտնենք հասարակութեան և ուխտաւորների մէջ և լսենք նրանց պարզ ու անկեղծ երգերն ու լէլէները: Չէ՞ որ այսօր երիտասարդ 25-ամեայ ճեմարանի հարսանիքն է կատարվում...

Արիստ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 2-ին

Եօթ տարուց աւելի է, ինչ Տաֆի-Թաղի Քաժոյեանց ս. Գէորգ եկեղեցու վերաշինութեան հարցը զբաղեցնում էր ծխականներին և հոգևոր իշխանութեանը: Սեպտեմբերի 29-ին ստացվեց նահանգական վարչութիւնից կառավարութեան թոյլտուութիւնը և եկեղեցու հաստատված յատակագիծը. երէկ, ամսիս 1-ին, գումարվեց շինութեան մասնաժողովի նիստը, որ յայտնէ հոգևոր իշխանութեանը, թէ երբ է յարմար տեսնում ձեռնարկել գործին: Լսելով եկեղեցու միաբանութեան կարծիքները՝ մասնաժողովը յարմար դատեց զատկից յետոյ անմիջապէս սկսել, և յոյս յայտնեց, թէ կարելի կը լինի եկող դեկտեմբերին վերսկսել ժամասացութիւնը, իսկ բոլորովին պատրաստել 1901 թ. զատկին:

Ի նկատի ունենալով, որ եկեղեցին քանդելու օրից եկեղեցու միաբանութիւնը կը զրկվի իր եկամուտների նշանաւոր մասից՝ մասնաժողովը ցանկութիւն յայտնեց, որ ծուխը վաղօրօք հոգայ այդ մասին և կարգադրէ քահանաների և եկեղեցու սպասաւորների վիճակը շինութեան ժամանակամիջոցում, սահմանելով նրանց համար մասնաւոր ռոճիկ: Որովհետև մասնաժողովի 7 անդամներից երկուսը պակասել են, մասնաժողովի անդամ ճարտարապետ Ն. Գրիգորեանը առաջարկեց պակաս անդամների թիւը լրացնել տալ, նկատելով որ շինութեան գործի ամբողջ ծանրութիւնը կը մնայ երէցփոխ պ. Կարապետ Ջալալեանցի վրա, որ մենակ անկարող է տանել. իսկ մասնագէտ անդամները իրանց խորհուրդներից և ցուցմունքներից աւելին չեն կարող անել և հազիւ թէ ամեն ժողովի կարողանան մասնակցել. մինչդեռ գործը պահանջում է, որ ոչ մի նիստ ապարդիւն չանցնի: Մասնաժողովը հաւանեց հաստատված յատակագիծը, որ կազմել է ճարտարապետ Շիմկեվիչը, և յայտնեց նրան խորին շնորհակալութիւն իր աշխատութիւնների համար՝ գործին արագ ընթացք տալու մասին:

Ուրեմն մէկ և կէս, կամ առ առաւելն երկու տարուց յետոյ Թիֆլիսի Պալատի չքեղ փողոցի անկիւնում կունենանք վաղուց ցանկացած մի փառաւոր եկեղեցի. շնորհաւորում ենք եկեղեցու ծխականներին և քաղաքիս հայ հասարակութեանը: Մեծ յոյս ունենք, որ մեր հասարակութիւնը առատ նուէրներով կաջակցէ այս գործին: Եկեղեցու դրամագլխից 50,000 ռուբլի է որոշված ծախսել. բայց դա բաւական չէ որ մենք ունենանք մի լաւ եկեղեցի քաղաքի ամենագեղեցիկ փողոցի վրա: Թիֆլիսի հարուստ հայերը, մասնաւորապէս Սօլոլակի բնակիչները, որոնք ծուխ և ժամաւոր են այս եկեղեցուց, պէտք է ցանկանան, որ Աստուծու տունը իրանց բնակարաններից առաւել փառաւոր և վայելուչ լինի:

Յովսէփ քահանայ Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ այս հոկտեմբերի 8-ին, Բագուի նահանգական դատարանում նշանակված է Շամախու հայոց կոնսիստորիայի Կովկասի ուսումնարանական իշխանութեան դէմ բացված դատը՝ գրաւած եկեղեցապատկան կալուածքները վերադարձնելու մասին:

—

Կովկասեան ցուցահանդէսի խնդիրը կարելի է համարել բաւականաչափ պարզված և որոշված: Ցուցահանդէսը նշանակված է 1901 թ-ին: Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը ներկայացրել է Կովկասեան կառավարչապետին ցուցահանդէս կազմելու համար զեկուցագիր: Երկրագործութեան մինիստրը յայտնեց իր համակրութիւնը ցուցահանդէս կազմելու գաղափարին: Ցուցահանդէսը պէտք է լինի ընդհանուր կովկասեան և պէտք է բովանդակէ իր մէջ ոչ միայն գիւղատնտեսութեան, այլ և գործարանական արդիւնագործութեան առարկաները:

—

Թիֆլիսից դէպի Վլադիկավկազ տանող ճանապարհը այժմ ունի բաւականաչափ ծածկված անցքեր կամ տօննէլներ այն տեղերում, որտեղ յաճախ փուլ է գալիս ձիւնը: Ճանապարհների վարչութիւնը այժմ չունում է դարձեալ մի քանի անցքեր Գուդաուր և Կազբէկ կայարանների մէջ, որպէս զի բոլորովին ապահով լինի վտանգներից:

—

Այսօր, հոկտեմբերի 7-ին, կը բացվի Թիֆլիսում քաղաքային մի նոր դպրոց: Դպրոցի համար վարձված է Գրաֆսկայա փողոցի վրա գտնվող Կլիչի տունը: Բացումը պէտք է տեղի ունենայ ժամի 1-ին:

—

«Тифлисскій Листокъ» լրագիրը հաղորդում է, որ Օդէսայի քաղաքապետը արգելել է Սպիվակովսկու օպերետային խմբի ներկայացումները՝ անհասկանալի լեզու և հրէական բարբառ գործածելու համար:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ հանգուցեալ Գէորգ Քանանեանցի յիշատակին կատարված հոգեհանգստի առիթով, հանգուցեալի այրին՝ տիկ. Քանանեանց, որ ներկայ էր հոգեհանգստին՝ նուիրել է 200 ռուբլի Մայր Աթոռի մատենադարանին և 200 ռուբլի գաղթականներին բաժանելու համար. ասում են, որ նոյնքան էլ բաժանել է միաբանութեանը»:

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ, սեպտեմբերի 24-ից, մեզ գրում են հետևեալը. «Որքան էլ որ տարին երաշտանցաւ, այնու ամենայնիւ՝ մեր շրջանի գիւղացիները հացի խիստ նեղութիւն չեն քաշի և մի կերպ «եօլա» կերթան առաջիկայ ձմեռը. թերևս բոլորովին ազատ լինէին նեղութիւնից, եթէ որ արտերը չը վարակվէին «զարաճուչ» կոչվող վնասակար հնդով, որը առաջ է գալիս երաշտութիւնից: Սակայն եկող տարվայ հոգսն է այժմ տանջում մեր գիւղացիներին, որովհետև մեզանում ցանքսի մեծ մասը լինում է աշնան, իսկ երկինքը դարձեալ անձրև չէ տալիս: Թէև աշնան եղանակին յատուկ՝ երկինքը միշտ ծածկված է ամպերով, բայց կարծես նրանք հմայված են, շարժվում են, խտանում են ու սևանում, դարձեալ անձրև չէ գալիս, որ երկիրը փափկանայ, հնար լինի վարելու: Այդ երևոյթն ինքն ըստ ինքեան ամրապնդում է գիւղացու նախապաշարմունքը, որ իբր թէ՝ երկինքը կապել են, դրա համար էլ անձրև չէ գալիս: Ցաւեանայն դէպք, եթէ այս կերպ շարունակվելու լինի երաշտութիւնը, գիւղացիների վիճակը կատարելապէս վատ կը լինի եկող տարի: Երէկ մի քիչ անձրև եկաւ: Ցունիս ամսի 7-ից սկսած կարգին անձրև չէ եկել մեզանում, երկու անգամ միայն խնայողութեամբ ցօղել է այրված երկիրը, ուստի դաշտ ու սար, պարտէզ ու այգի մոխրացել ու ամայի են դարձել: Մարդ չէ ախորժում նայել այն ծառաստաններին, որոնք ամենայն տարի՝ այս միջոցներում՝ կանաչ տերևներով, դեղին ու կարմիր պտուղներով զարդարված՝ նազելի կերպով օրօրվում էին հողմերի առաջ: Իսկ այժմ. ծառ ու թուփ, անդ ու անդաստան իրանց զարդից մերկացած՝ թաղվել են փոշու մէջ:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքացի մի ինտելիգէնտ երիտասարդ, Վ. Շահպարոնեան, և մի ուրիշ պարոն, Ե. Բաստուրմաճեան, միասին մեր քաղաքում նոր, եւրոպական սիստէմով ձիթհանք և ջրաղաց են շինում: Նոյն պ. Վ. Շահպարոնեան մտադիր է մօտիկ ապագայում վուշի և կանեփի մշակութեամբ զբաղվելու, որով գուցէ կարելի լինի այդ գործի հիմքը դնելու մեր դաւառում: Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն»:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Այգիների խաղողը վաղուց հասել է, բայց գինեգործները և խաղող գնողները լուռ ու մունջ սպասում են և ոչ ոք ձայն չէ հանում խաղող գնելու, գին նշանակելու և «մաղանդա» կտրելու. և այդտեղը վիզը ծռած սպասում է անհամբերութեամբ, աղաչում-պաղատում է, որ «մի քանի չափ» բարձր գնով վաճառէ, որովհետև օր օրի վրա խաղողը փչանում է և պակասում. բայց խաղող գնողի սիրտը քարացել է: Նա մէկին մէկ գինը պակասեցնում է և հաստատ կանգնում իր նշանակած գնի վրա, կամ յայտնում, որ իրան խաղող հարկաւոր չէ: Ահա այն ցաւալի վիճակը, ահա այն խաղը, որ ամեն տարի կատարվում է խեղճ այգետէրերի գլխին: Նկատելով այգետէրերի անելանելի վիճակը՝ մի քանի երիտասարդներ ժողով գումարեցին և որոշեցին այգետէրերից մի ընկերութիւն կազմել, խաղողից գինի պատրաստելու համար, որպէս զի գինու պահեստ չունեցող այգետէրը կարողանայ իր խաղողը տեղաւորել ընկերութեան մառանում և ստիպված չը լինի չնչին գնով խաղողը վաճառելու: Այս լուրը տարածվելուն պէս, երբ այգետէրերից շատերը ցանկութիւն յայտնեցին ընկերութեան մէջ մտնելու՝ անմիջապէս խաղողի գինը բարձրացաւ և մինչև այդ օրը խաղողի խալվարը (30 պուդ) 10—12 ռուբլուց աւել չը բարձրացնողը և 14—15 ռուբլով գնել չը ցանկացողը առաջարկեց խալվարին 15—16 ռուբլի, բայց այգետէրերը այդ գնովն էլ չեն կամենում վաճառել: Խաղող գնող հարուստները, տեսնելով, որ ընկերութիւնը կարող է կազմակերպվել, իրանք էլ ցանկութիւն յայտնեցին մտնել ընկերութեան մէջ, ցանկանալով խանգարել ընկերութիւնը. սակայն այդ խաղն էլ անաջող կանցնի, որովհետև 10—15 այգետէրեր վճռել են գինեգործական ընկերութիւն կազմել, որի համար և վարձել են կառավարիչ. իսկ մասնագէտ-գինեգործ պ. Գ. Նաւասարդեան յանձն է առել ձրիաբար հսկել գինիների վրա, եթէ ընկերութիւնը կազմակերպվի: Ցանկալի է, որ այս գեղեցիկ մտադրութիւնը իրականանայ և մեր այգետէրերը կարողանան ընդ միշտ ազատվել հարստահարիչ օգնականներից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Koelnische Zeitung» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հեռագրում է սեպտեմբերի 26-ից (հոկտեմբերի 8-ից). «Այն ունկնդրութեան ժամանակ, որ ռուսաց դեսպան Զինովիէվ ունէր սուլթանի մօտ ուրբաթ օրը, դեսպանը մի անգամ ևս կրկնեց իր առաջարկութիւնը՝ Ռուսաստանի սահմաններում գտնվող հայ վախճանականներին իրանց հայրենիքում բնակեցնելու վերաբերմամբ:—Սուլթանը յետ ուղարկեց հայոց պատրիարքը Օրմանեանին նրա հրաժարականի խնդիրքը, մի և նոյն ժամանակ ցանկութիւն յայտնեց, որ պատրիարքը սպասէ հայոց գործերի վերաբերմամբ Իլդիզ-քիոսկում կազմված յանձնաժողովի որոշման, որ տեղի է ունենալու այս օրերս: Սակայն պատրիարքը պաշտօնապէս յետ չը վերցրեց իր խնդիրքը և պատրիարքարան չէ գնում»:

—Նիչից հեռագրում են սեպտեմբերի 28-ին հետևեալը. «Գահական ճառին պատասխան-ուղերձը քննելու համար սկուպշչինայի երէկվայ կայացած նիստի մէջ պատգամաւոր Պոպովիչ մի ճառ արտասանեց, որի մէջ այն յիմար միտքն էր յայտնում, թէ դաւադրութեան և Միլանի կեանքի դէմ փորձ անելու պատասխանատուութիւնը ընկնում է ռուսաց մաժուլի և Հունգարիայում հրատարակվող սերբական լրագիրների վրա: Մինչև մինիստր-նախագահը այն համոզման եկաւ, որ պատգամաւոր Պոպովիչ սուտ է խօսում, որովհետև սկսեց հերքել այդ պատգամաւորի ստութիւնները: Մինիստր-նախագահը մի և նոյն ժամանակ ասում էր, թէ ռուսաց մաժուլը Ռուսաստանի հասարակական կարծիքի արտայայտիչը չէ: Սկուպշչինան միաձայն ընդունեց ուղերձը»:

—«Daily Chronicle» լրագիրը ասում է, որ բօէրների ուլտիմատումը արդարացի է. Զեմբերլէն խայտառակեց Բրիտանիան պատերազմով:

—Պարիզից հեռագրում են «Новости» լրագրին, որ Բէնների դատավճիռը նորից կը վերաքննվի, Զերնուսսկիի կեղծ ցուցմունքի պատճառով: Վիէննայի պրոֆէսոր Մոսէտիգ, որի վրա մատնացոյց էր արել նա, հաստատում է, որ Զերնուսսկի սուտ է ասել:

—Լոնդոնից հեռագրում են «Frankfurt. Zeitung» լրագրին, որ Հարաւային Աֆրիկայում 70 հանքատէրեր դադարեցրել են իրանց գործունէութիւնը և այդ պատճառով մի քանի հազար կաֆիրներ մնացել են առանց գործի:

—Սերբիական սկուպշչինան՝ Նիշում միաձայն ընդունեց թագաւորին ներկայացնելիք ուղերձի ծրագիրը: Ուղերձը պարունակում է իր մէջ դահական ճառի կրկնողութիւն, գովաբանում է Միլան Օբրէնօվիչի մատուցած ծառայութիւնները և պախարակում է օտարերկրեայ մաժուլի մի մասը: Այդ ուղերձի հետ սկուպշչինայի բոլոր անդամներ in corpore գնացին Ալէքսանդր թագաւորի մօտ, որոնց նա ասեց թէ ինքը մը-տադիր չէ կառավարութեան սիստեմի մէջ որ և փոփոխութիւն մտցնել: Ապա սկուպշչինայի անդամները գնացին Միլանի մօտ և շնորհաւորեցին նրան փորձանքից ազատվելու պատճառով: Այն լուրը, թէ Միլան աշխատում է հաժոդել սկուպշչինային իրան թագաժառանգ ճանաչել՝ հաստատվում է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

5 հոկտեմբերի

ԲՐԻՍԷԼ: Բէլգիական բանկը բարձրացրեց դիսկօնտը մինչև $4^1/_2$%:

ԿԱՊՇՏԱԴՏ: Կիմբերլէյում և Օրանժեան հանրապետութեան սահմանակից բրիտանական ուրիշ քաղաքներում պատերազմական դրութիւն է յայտարարված:

ՊՐԷՏՕՐԻԱ: Տրանսվաալի կառավարութեան հոկտեմբերի 2-ից ստացված հեռագիրները հաղորդում են, որ Մէֆկինգից դէպի հիւսիս կռիւը շարունակվում է: Երկրորդ կուից յետոյ անգլիացիները յետ քաշվեցին քաղաքի ուղղութեամբ, բայց մի փոքր ժամանակից յետոյ վերադարձան և վերսկսեցին յարձակումը:

ԿԱՊՇՏԱԴՏ: Կիմբերլէյից հեռագիրը հաղորդում է, որ Ստէրֆոնտէյնի մօտ կռիւ սկսվեց բօէրների հետ: Հինգ բօէրներ սպանվեցին և եօթը վիրաւորվեցին: Բրիտանացոց կողմից ոչինչ կորուստ չը կար:

ԼՕՆԴՕՆ: Լէդի-Սմիթից «Daily Telegraph» լրագրին հաղորդում են, որ այսօր առաւօտեան հրման արձակվեց հեռանալ Դուդդիից: Դուրբանից հաղորդում են, որ այնտեղի քաղաքագլուխը Դուդդիից հեռագիր ստացաւ, որից երևում է, որ բոլոր կանայքը և երեխաները հեռացել են այդ քաղաքից:

Գլէնկէից հաղորդում են, որ Նատալում ածխանքերի չահագործման դադարեցումը չէ կարող արգելք լինել Դուրբանի նաւերին ածուխ մատակարարելուն. մինչև աշխատանքների վերսկսելը ածուխ կը տանվի Հնդկաստանից:

ՊԱՐԻԶ: Կոլոնիաների մինիստրը հեռագիր ստացաւ պօրուչիկ Պալիէից, որը ընդունեց Վուլէի զօրաբաժնի հրամանատարութիւնը: Հեռագիրը հաստատում է դնդապետ Կլօբաի սպանութեան տեղեկութիւնը, բայց Պալիէ օգնութիւն հացրեց պօրուչիկ Մէնիէին, որը ոչ թէ միայն չէ մեռել ստացած վէրքերից, այլ և առողջանալու վրա է: Վուլէ և Շանուան այլ ևս արշաւախմբում չեն գտնվում, բայց հեռագրում չէ ասված, թէ ինչ պատահեց նրանց հետ: Արշաւախումբը ապահովացրած է պաշարեղէններով. բոլորն էլ առողջ են: Պալիէ աշխատում է միանալ Ֆուրօ-Լամիի արշաւախմբի հետ, որ ճանապարհ ընկաւ երէկ Դամերգան:

ՄԱԴՐԻԴ: Բարցէլօնեան համալսարանում տեղի ունեցան անկարգութիւններ: Կանչված ժանդարմները ձերբակալեցին երկու ուսանողի: Կաստէլօնում տեղի ունեցաւ հանրապետական մի փոքրիկ ցոյց. մէկ մարդ ձերբակալված է:

ԼՕՆԴՕՆ: Այսօր տեղի ունեցաւ պարլամենտի արտակարգ նստաշրջանի բացումը: Գահական ճառի մէջ ասված է, թէ պետութեան շահերը խորին կերպով շօշափող դէպքերը ստիպում են թագուհուն դիմել պարլամենտի խորհրդին և օգնութեանը: Իրերի դրութեան պատճառով Հարաւային Աֆրիկայում, նպատակայարմար է, որ կառավարութիւնը հնարաւորութիւն ունենայ զօրեղացնելու պատերազմական ոյժը, հրաւիրելով պահեստի զօրքերը: Եթէ մի կողմ թողնենք այն դժուարութիւնները, որ պատճառեցին Հարաւային Աֆրիկայի հանրապետութիւնները՝ քաղաքական աշխարհի դրութիւնը շարունակում է խաղաղ բնաւորութիւն ունենալ: Այն միջոցները, որոնք ձեռք են առնված ծախսերը ծածկելու համար, որ պահանջում է իրերի դրութիւնը Հարաւային Աֆրիկայում՝ կառաջարկվեն պատգամաւորների ժողովին:

ԼՕՆԴՕՆ: Գլխաւոր հրամանատար Բուլլէր ճանապարհ ընկնելով, յայտնեց, որ չի սկսի լուրջ յարձակողական գործողութիւն՝ մինչև որ չունենայ իր ձեռքի տակ 75,000 զօրք:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

5 հոկտեմբերի

Մուրհակների ընթացքը

Երեք ամսով	Լոնդոնի վրա	10 ֆունտ	93,70
„ „	Բերլինի վրա	100 մարկ	$45,67^1/_2$
„ „	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,15
Չեկը	Լոնդոնի վրա	10 ֆունտ	94,85
„	Բերլինի վրա	100 մարկ	46,30
„	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,50
Բօրսային դիսկոնտ			$6—7^1/_2$
4% պետական բէնտա			$99^1/_8$
4% ազն. կալ. բանկի էքս. թղթ.			$98^5/_8$
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի			$98^1/_2$
5% վիճակ. տոմս. առաջին նեբքեն փոխ.			$298^1/_2$
5% „ „ երկրորդ „ „			267
5% „ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.			$208^1/_2$
5% ոսկու բենտա			
5% գրաւ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.			
$4^1/_2$% նեբքեն երկաթուղ. փոխ. 1890			$100^1/_8$
Նոյնը	1892		$100^1/_2$
5% Թիֆլիսի վարկի ընկերք.			$97^1/_2$
$4^1/_2$% Թիֆլիսի կալուած. բանկի			95
6% Քուտայիսի կալուած. բանկի			100(?)
5% „ „ „			101(?)
Ակցիաներ Ռուս. առևտր.-արդիւն. ընկ.			251
„ Եղբ. Նոբելի նաւթ. ընկերք.			645
„ Կասպիական ընկ.			637
„ Բագուայ նաւթ. ընկ.			773

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ՐՕՍՏՕՎ, Զ. Բ. Տպագրել չենք կարող. խմբագրութեան մէջ կան նամակներ, որոնք եղելութեան այնպէս չեն նայում, ինչպէս դուք: Տպագրելով ձեր նամակը, մենք իրաւունք չէինք ունենայ մերժել հակառակ կարծիքների տպագրութիւնը և այդպիսով կը բացվէր անդին բանակռիւ: Ինքներդ դատեցէք՝ արժէ՞ զբաղեցնել ընթերցողներին այնպիսի հարցով, որը չէ էլ կարելի պարզել մամուլի մէջ:

ՄԻԼԱՆ, Ծ. Այդ առարկայի վերաբերմամբ անկարող ենք որ և է բան տպագրել:

ԱՐԴԱՆՈՒՇ: Կ. Փ. Հերքումը պէտք է ուղարկել այն լրագրին, որ տպագրել է թղթակցութիւնը. ձեր իրաւունքն է պահանջել, որ նա տպվի:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¼—2 ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիւի, արեան և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հասախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարգելով. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
36—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
Ընդունելութեան քննութիւնները նշանակված են ներկայ հոկտեմբեր ամսի 11-ին և 12-ին: 2—3

Մի Երիտասարդ,

որ իր ուսումը աւարտել է Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում, ցանկանում է դասեր ունենալ: Հասցէն. Կուլիջանեանի խանութ, Վօրոնցովի արձանի հանդէպ. 2—2

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:
Գանձակայա փողոց, տուն Մարգարով, № 31:
(Ե. Հ. Շ.) 73—100

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
„Վանայ Սազ"
Բ. մաս
Գ. ՇԷՐԷՆՑԻ
Գինն է 75 կ.
Ա. և Բ. մասերը միասին 1 ր. 50 կոպէկ:
Գիտել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens.
6—10

Ամսիս 10-ին, կիրակի օրը առաւօտեան 11 ժամին Զէյդաչէն Աւետեաց ս. Աստուածածնի եկեղեցուը լինելու է նոյն եկեղեցու միաբան հանդուցեալ Սարգիս աւագ քահանայ Աղաջանեանցի տեղը՝ նոր քահանայի կամ քահանայացուի ընտրութիւն. ուստի սրանով հրաւիրում եմ միմիայն հանդուցեալի ծխականներին՝ ներկայ լինել յիշեալ եկեղեցումն ընտրութեանը մասնակցելու:
Գործակալ բ. մասին Թիֆլիսի՝
1—3 *Գրիգոր քահանայ Մանդակունի*

ԹԻՖԼ. ՀԱՑՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
վաճառվում են
կենսագրութիւններից՝

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ, Ա. Զօրանեանի	50 կ.
ԲՈՒԴՀԱ, կազմ. Ստ. Մալխ.	20 »
ԿՕՆՖՈՒՑԻՈՍ, կազմ. Գ. Բաղր.	20 »
ՊԱՍԿԱԼ, թ. Գ. Բաղր.	20 »
ԳԱԼԻԼԷՑ, կազմ. Հ. Առաքելեանց	25 »
ՊՈՒՇԿԻՆ, Ս. Լիսիցեանի	40 »
ԳԼԱԴՍՏՕՆ, Լէօի	80 »

Գիտել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.
5—5

Հարկաւոր է **ԲՕՆՆԱ** *կրթված տղուկների հետ ըզբաղվելու: Դիմել Մոսկովսկայա փողոց, տուն Ենիկօլօպովի, № 7, Նաղարբէգեանին:* 2—3

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Խմբական կրկնողութիւնները վաղվանից սկսած նշանակվում են շաբաթական երկու անգամ, շաբաթ և երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 6-ին: Տուն Արաֆելովի, բնակարան Իննոչենցու, փողոց Զավչավաձէվսկայա:
Նոր ձայներ ընդունվում են: 3—5

Հ. Աւետիք Կոյլաւի
ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ
ԲԱՌԳԻՐՔԸ
1667 էջ, գինը, 10 ռուբլի, ծախվում է 5 ռուբլիով Ա. Խուդավերդեանի մագազինում, Գօլովինսկի պրօսպէկտի վրա: Օտար քաղաքացիք պէտք է վճարեն 50 կոպ. պօստային ծախս, իսկ վերադիր վճառով պահանջողները պէտք է ուղարկեն 2 ռուբլի: 4—15

Լոյս տեսաւ
ԳԵՏ. ՄՈՋՈՒԵԱՆԻ
«ՏԻԶԲՕՆԻ ԿԱԼԱՆԱՒՈՐԸ»
Գինն է 15 կոպ.
Վաճառվում է Թիֆլիսի և գաւառական քաղաքների գրավաճառանոցներում և Ալէքսանդրոպոլում՝ հեղինակի մօտ: 2—5

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՑՖԷԼԴ
Մաղերեան փողոց, № 5.
որ մասնագէտ է կաշու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
46—60



ՑԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասաէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԵԼԵՓՕՆ № 642.

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների:

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրօտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլեֆօնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա:



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵՑԻԱ և ՏԱՔՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբինները, խողովակները, մեքենաները և ջրհանները:

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ:

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. Շ.) 41—100

Կրթված եւ ինտելիգենտ հասարակութեան համար

Գօլովինսկի պրօսպէկտ, տուն Արաֆելովի, Կաղետների կօրպուսի հանդէպ:

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ
ԴԵՌ ԵՒՍ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ
ԱՑՏԵԿՆԵՐԻ ՑԵՂԻՑ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՆԿԱՍ ՑԵՂԻ ՏՈՀՄԻՑ

Այդ ացտեկները ցոյց են տրված եղել մինչև անգամ Եւրօպայի ամենամեծ քաղաքներում—Բերլինում, Լօնդօնում, Պետերբուրգում, Մօսկվայում և Խարկովում, և գրաւել են գիտնականների առանձին ուշադրութիւնը: Ացտեկները ներկայացրված են եղել բոլոր մարդաբանական ընկերութիւններին, յայտնի պրոֆէսօրներ դոկտ. Ռուդ. Վիրխովին—Բերլինում, պրոֆէսօր Բանկէին—Մինխէնում, պրոֆ. դոկտոր Բուդինդերին—Հայդելբերգում, պրոֆ. Բրանդին—Խարկովում, որոնք առանձին հետաքրքրութեամբ զննեցին և շատ բան գրեցին նրանց մասին:

ԴԱՀՎԱԾ ԱՄԵՐԻԿՈՒՀԻ ՏԻԿԻՆ **ՄԻՍՍ ԷՄԷԼԻՆԱ,** *որին «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ» են կոչում:*

Միսս Էմէլինա իր մարմնի վրա 300-ից աւելի գեղարուեստական նկարներ ու գլխատառեր ունի, այդ բոլորը չինված են ԱՍՂՈՎ ԾԱԿԾԿԵԼՈՎ, որոնց թիւը հասնում է մինչև 3,000,000:
Ամբողջ դաջելը տևել է 2 տարի և արժէ 4000 դոլլար:
Միսս ԷՄԷԼԻՆԱ շատ հետաքրքիր է նկարիչների, պրոֆէսօրների և առհասարակ ինտելիգենտ հասարակութեան համար: Խօսում է ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն:
Դաջել է պրոֆէսօր Աուրելի Զիկագօյում: Միսս Էմէլինա ներկայացրված է գեղարուեստական ճեմարաններին՝ Բերլինում, Պարիզում և Լօնդօնում: Ստացել է նա ատտեստատներ Բեկկեր, Մէնցել և ուրիշ պրոֆէսօրներից:

ՀԱԿԱՑ *Ամենամեծ մարդը աշխարհիս երեսին* 16 *տարեկան, բարձրութիւնը* 3 *արշին* 6 *վերշոկ:* **ԵՐԵԽԱՑ**
Տեղերի գները 50 *և* 30 *կոպէկ: Երեխաները մինչև* 14 *տարեկան և զինուորները վճարում են կէսը: Բաց է հասարակ օրերը առաւօտեան* 10 *ժամից, իսկ տօն և կիրակի օրերը՝ առաւօտեան* 11 *ժամից մինչև երեկոյեան* 10 *ժամը:* 4—6

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօլովինսկի Պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Քաշուէթի սուրբ Գէորգ եկեղեցու:

Ստացել ենք մեծ քանակութեամբ աշնանային և ձմերային սեզօնի համար՝
Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ:

Ստացված է նոյնպէս **ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ.**— *դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և բէալական ուսումնարանների:*
Ունենալով մեծ քանակութեամբ մատէրիաներ, ընդունում ենք նաև ամեն տեսակ պատուէրներ: Գները ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան:
Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն պատուէրի 1/6 *մասը:* 9—40

M. 109486

ԲԱԳԻՈՒՄ
Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ
(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)
Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ
(*քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան*)

Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից: Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և բէալական դպրոց մտնելու համար: Ուսումը սկված է սեպտեմբերի 6-ից:
Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆօնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի: 2—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,*
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, ժամերով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 13/25 *հոկտեմբերի* ՄԻՆԳՐԷԼԻԱ *շոգենաւը, նաւապետ* ՇԵԼՏ: *Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը* 4-*ին ճաշից յետոյ:*
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—*պ.* Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—*պ.* Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայտուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—*եղբ.* Վ. և Ի. Մուրադեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—*պ.* Մելխիոր Հերշենզոնին: (Ե. Հ. Շ.) 9—20

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Октября 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.